ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 2/06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 28.09.2020թ.

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով, նույն հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշումը և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 13-րդ ենթակետը՝

ՊԱՐԶԵՑԻ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությունը և ընդհանուր զորահավաքը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Կասեցնել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հարուցված և չավարտված բոլոր վարչական վարույթները՝ մինչև կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների վերացումը, բացառությամբ՝ անձանց կյանքին և առողջությանը իրական վտանգ սպառնացող անհետաձգելի դեպքերի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

X _____

ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆ